են գտել և այժմ ևս գտնում են շարունակելու իրանց ուսումը թէ արքունական և թէ մեր ուսումնարաններում:

—

Պարսկաստանի Դավրէժ քաղաքից մեզ խնդրում են տպել հետևեալը. «Մշակի» ներկայ թւի № 54-ում մենք արդէն յայտնեցինք քաղաքիս Լիլաւայ թաղի «Ընթերցասիրաց ընկերութիւն» վերնագրով նորաբաց ընթերցարանի վերաբերմամբ, որը բացված է մօտաւորապէս 20-աչափ եռանդուն երիտասարդների անդամակցութեամբ և գործվում է հասարակութեան ընդհանուր քուէարկութեամբ ընտրված հայ երկսեռ դպրոցների այժմեան հոգաբարձութեան հսկողութեան ներքոյ: Ընթերցողը կը յիշէ անշուշտ, որ այդ ընթերցարանի թշուառ դրութիւնը մանաւորապէս բարւոքելու համար, առանձին նամակներով դիմել էինք պ. պ. հայ լրագրապետներին և հեղինակներին խնդրելով՝ որ նրանք էլ չը զլանան մասնակցել մի այսպիսի բարենպատակ ձեռնարկութեան, առաջինները՝ իրանց պարբերական թերթերով յորդորելով հասարակութեանը օժանդակութեան ձեռք կարկառելու, իսկ վերջինները՝ իրանց հեղինակութիւններից մի մի օրինակ նուիրելով Թաղիս նորաբաց աղքատիկ ընթերցարանին: Բայց ցաւօք սրտի պէտք է խոստովանել, որ մեր խնդիրքը մնաց «ձայն բարբառոյ յանապատի», բացի «Մշակը» և «Արձագանքը», որոնք համակրելով մեր ձեռնարկութեան, մեր յօղուածին տեղ տուին իրանց թերթերի մէջ: Ընթերցարանը թէև իր գոյութեամբ պարտական է ազնիւ հոգաբարձութեան և ընկերութեան, բայց առաւելապէս պարտական է «Մշակին» և Արձագանքին», որոնց յորդորների շնորհիւ արդէն ընթերցարանը ունի 100-աչափ ընթերցանելի սեփական գրքեր նուիրված մի քանի մարդասէրներից: Ընթերցարանիս ընկերութեանը քաջ յայտնի լինելով պ. Սանասարեանցի մարդասիրական եռանդը, ամենախորին յարգանքով խնդրում է, ինչպէս շատ բարենպատակ գործերում, նոյնպէս և Թաղիս ընթերցարանի անտանելի դրութիւնը բարւոքելու համար, բարեհաճել ցոյց տալ իր առատաձեռնութիւնը և դրանով բարձրացնել ընթերցարանի դրութիւնը: Յոյս ունենք և սպասում ենք: Ուստի, պ. խմբագիր, խնդրում ենք թէ ընթերցարանի անդամների և թէ նուիրատուների ազգանունները տպագրել «Մշակի» մէջ ի գիտութիւն նոցա և հասարակութեան»: Ցաւում ենք, որ չենք կարող տպել «Մշակի» մէջ Դավրէժի «Ընթերցասիրաց ընկերութեան» թէ անդամների և թէ նուիրատուների անունները, որովհետև մեր խմբագրութեան մէջ շատ կան այդպիսի մանրամասն նուիրատուութեանց ցուցակներ, և եթէ մենք տպելու լինենք այդ բոլորը, այն ժամանակ մեր լրագրի էջերը կը լցվեն միայն ազգանուններով և տեղ չի մնայ յօղուածների համար:

—

«Русскій Курьеръ» լրագրին Ս. Պետերբուրգից հաղորդում են հետևեալը: Բուխարայից այստեղ ստացված տեղեկութիւնների համեմատ, եկող ամառը Ս. Պետերբուրգ կը հասանի բուխարացիների մի խումբ երկրպագելու համար կայսերական հասարակաց գրադարանում գտնվող Մահմէդի փեսայ Ալիի որդւոց արիւնով թրջված Ղուրանին, որը դուրս են բերել ռուսները Սամարկանդից և որը Բուխարայում բնակվող մահմեդականների համար սրբութիւն է համարվում:

—

«Тифл. Объяв.» լրագիրը լսել է, որ Թիֆլիսի պ. Նահանգապետի կարգադրութեամբ՝ արգելված է կանացի սեռին պատկանող բոլոր անձանց առևտուր անել գինետներում, դուխաններում և գարեջրետներում: Առաջ բերելով նահանգիս նոր պետի այդ խիստ օգտակար կարգադրութիւնը, մենք յոյս ունենք, ասում է վերոյիշեալ լրագիրը, որ այդ կարգադրութեամբ արմատախիլ կը լինի այն անբարոյականութիւնը, որը թագաւորում է ոչ միայն մեր քաղաքի խուլ և յետ ընկած փողոցներում, այլ և նրա ամենալաւ մասերում: Մենք հաւատացած ենք, որ զրկելով կանանցը գարեջրետներում առևտուր անելու իրաւունքից, դրանով երիտասարդութիւնը ազատվում է այն թակարդից, ուր մի քանիսներին կողոպտում են մինչև վերջին կօպէկը, իսկ մի քանիսներին էլ ուղարկում են հիւանդանոցները...

—

Նոյն լրագրի մէջ կարդում ենք, որ խմիչքների կանոնադրութեան հիման վրա, գինետներ, դուխաններ և գարեջրետներ բանալ թոյլ է տրվում, երբ դրանք գտնվում են յայտնի տարածութեան վրա եկեղեցիներից, զօրանոցներից, ուսումնարաններից և դրանց նման ուրիշ հիմնարկութիւններից: Վերոյիշեալ կանոնադրութեան հիման վրա, գարեջրետները պէտք է հեռու լինեն այդ հիմնարկութիւններից 20 սաժէն, իսկ ուրիշ հիմնարկութիւնները 40 սաժէն: Ճշդութեամբ հետևելով այդ կանոնադրութեանը, քաղաքային վարչութիւնը խիստ շատ առևտրականներին իրաւունք չէ տալիս բանալ վերոյիշեալ հիմնարկութիւնները:

—

Շաբաթ օր, դեկտեմբերի 17-ին, Կովկասի կառավարչապետը ճանապարհ ընկաւ դէպի Ս. Պետերբուրգ:

—

Ուրբաթ, դեկտեմբերի 16-ին, Արծրունու թատրոնում կայացաւ պ. Պալեանի ներկայացումն մասնակցութեամբ տ. Փաշայեան-Տէր-Գրիգորեանի, օր. Հախինմէի, պ. պ. Տէր-Գրիգորեանի, Տէր-Դաւթեանի, Գէղէմեանի և ուրիշների: Խաղում էին Նկարիչներ, Աշնանային երեկոյ և Հացի և ջրի յոյսով վօդևիլները: Վերջին պիեսան, որ առաջին անգամ էր խաղացվում հայերէն, շատ գեղեցիկ անցաւ շնորհիւ տ. Փաշայեան-Տէր-Գրիգորեանի խելացի և մտածված խաղի: Շնորհալի տիկինը ամենայն մանրամասնութեամբ մշակել էր իր դերը և շատ գեղեցիկ խաղաց: Այդ վօդևիլի վերջը տ. Փաշայեան-Տէր-Գրիգորեան ընծայ ստացաւ մի զոյգ բրիլեանտէ օղեր: Ներկայացմանը բաւական հասարակութիւն կար:

—

Նախկին պատերազմական մինիստր կոմս Դիմիտրի Ալէքսէևիչ Միլիւտին ներկայումս զբաղված է, որպէս հաղորդում են «Новости Дня» լրագրին, հանգուցեալ Թագաւորի մանրամասն կենսագրութիւնը կազմելով:

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Վան, 2/14 Նոյեմբեր 1883

Վաղուց է որ Վան քաղաքի բանտին մէջ շղթայակապ կը հեծէ Լիմ գիւղացի մի կորիճ հայ երիտասարդ, Թովմաս անուն: Սորա աններելի յանցանքը եղած է անձնապաշտպանութեան համար մի քուրդի սպանելը որ յարձակելով Թովմասին վրայ, աշխատած էր սպանել սրան: Թովմաս անզէն էր և իր թշնամւոյն զէնքը խլելով նորա ձեռքից, սպանեց նրան: Երեք տարին անցաւ որ մահապարտների բանտին մէջ շղթայակապ աշխատանքի ենթարկված կանցունէ իր սև օրեր. բայց մինչև այժմ կատարվող բոլոր հարցաքննութիւնները Թովմասին անմեղութիւնը կը հաստատեն: Սպանուած քրդի բարեկամները այրեցին, քանդեցին, կողոպտեցին Թովմասի տունը տեղը. հալածական վարեցին նորա ընտանիքը. Լիմ գիւղը անդադար իրենց յարձակումներով և կողոպուտներով անտանելի դրութեան մէջ ձգեցին. այս ամէնը քուրդեր արին և կանեն թիւրք կառավարութեան աչքին առջև որ ոչինչ արգելք չի դնէր: Թովմասի դատը Կ. Պոլիս Բ. Դուռն զրկուեցաւ և այնտեղէ ալ եկած թուղթերը իր անմեղութիւնը կը հաստատեն մասամբ. բայց տեղական կառավարութիւնը ամեն մասամբ դժուարութիւններ կը հանէ և չուզեր արձակել Թովմասին: Ընդհանուր դատախազը (պրօկուրօր գեներալ) որ հայատեաց մի թուրք է, կառաջարկէ այստեղի հայոց գլխաւորներին թէ ինձ համար գովեստի և շնորհակալութեան գիր գրեցէք Կ. Պոլիս և Լմեցի Թովմասին արձակեմ բանտէն: Ինչպէս կարելի է շնորհակալ լինել այն ընդհանուր դատախազէն որ իր Կ. Պոլիս յղած տեղեկագիրներին մէջ անդադար կը զրպարտէ հայերին համար թէ Վանի մէջ ամենէն աւելի անկարգ և չարագործներն են. թէ սուտ են հայերի հրատարակութիւնները հարստահարութիւնների մասին, թէ հարստահարիչներ, գողեր, մարդասպաններ և ամեն տեսակ գլխաւոր եղեռնագործներ հայերն են այստեղ, և այլն: Դեռ մօտ առեններ, երբ թիւրքեր Այգեստանի հայոց եկեղեցիների և քաղաքամէջի բողոքական հայոց ժողովարանի դռները մարդկային ապականութիւնով ծեփած էին գիշերայն և հայեր այս սրբապղծութեան դէմ բողոքեցին Բ. Դուռը, ընդհանուր դատախազը տեղեկագիր գրկեց Բ. Դուռը թէ հայեր արած են այդ չարագործութիւն, որպէս զի առիթ ունենան թուրքերին զրպարտելու: Նմանապէս աշխատած էր բողոքական հայ հասարակութեան բռնադատել տալ մի թուղթ որի մէջ գրուած էր թէ իրենց ժողովարանի եղած նախատինքին համար հայ սրիկաների վրա կասկածներ ունեն: Բայց բողոքականները չէին ընդունած այդպիսի ցածութիւնը:

Արդ, հայեր ինչպէս շնորհակալութիւն յայտնեն մի այսպիսի ընդհանուր դատախազէ. դա ինքնասպանութիւն կը լինէր հայերի համար: Մի և նոյն ժամանակ Լմեցի Թովմասին ալ բանտը թողուլը շատ սրտացաւ բան է. այնպէս որ հայեր երկու թրի մէջտեղ մնացած են Թովմասի խնդրին մէջ: Բայց ի հարկէ մէկ մարդը զոհ պիտի լինի ընդհանուր սկզբունքի պաշտպանութեան և Լմեցի Թովմաս իւր ընտանիքով հանդերձ պիտի խմէ դառն թշուառութեան բաժակի յետին մրուրն ալ...:

Արդեօք Թիւրքիայէ զատ մի ուրիշ երկիր ալ կա՞յ ուր անձնապաշտպանութիւնը յանցանք համարուի, ուր անմարդի լեռների գլուխ իր անձ աւազակների դէմ պաշտպանելու համար զէնք կրելն արգելեն: Մի քանի շաբաթ յառաջ, քաղաքցի և գիւղացի 80-ի չափ վանցիներ Կ. Պոլսէն կը վերադառնային Վան: Սոցա մէջ կը գտնուէին այնպիսի թշուառներ որք երկար տարիներէ հեռու իրենց սիրելի ընտանիք և հայրենիք թողած, պանդխտած էին Կ. Պոլիս մի քանի գրոշ շահելու և իրենց պարտքեր և թշուառութիւններ փոքր ի շատէ թեթևցնելու համար: Դոքա իրենց դառն արտասուքով և խնայողութեամբ վաստակած փողէն մի քիչ զոհած էին, մի մի հատ հրացան գնելու որպէս զի ճանապարհին իրանց պաշտպանեն գողերէն: Երբ կարաւանը ճանապարհ կելնէ Էրզրումէն Վան գալու համար, թիւրք կառավարութիւնը կը հաւաքէ այդ Վանցի հայերի քով գտնուած բոլոր հրացանները և մի քանի վեց հարուածական ատրճանակներ (ր է վ օ լ վ ե ր) միայն կը թողու: Կարաւանը հազիւ թէ 6 ժամի չափ կը հեռանայ Էրզրումէն, Փալանտէօքէն լերին վրայ 60-ի չափ սպառազինուած և ձիաւոր աւազակներ կը յարձակին հայերի վրայ և ամբողջապէս կը կողոպտեն: Եղած կողոպուտը 3000 օսմ. ոսկու (28,500 րբլ.) չափ կը հաշուեն: Կողոպտուած կարաւանը կը վերադառնայ Էրզրում և կը բողոքէ կառավարութեան որ մի քանի անմեղ մարդեր ձերբակալելով հարցաքննութեան կենթարկէ: Կը լսենք թէ հարցաքննութիւնները մինչև այժմ մի որոշ հետևանք չեն ունեցած և կառավարութիւնը կաշխատի տանել բերելով ձանձրացնել կողոպտուած հայերին: Արդէն սրանք յուսահատուեր են և տեսնելով որ Էրզրումի մէջ մնալով ոչինչ չը շահելէ զատ, աւելորդ ծախքերի

---

նայեց նախ խաչի վրա, իսկ յետոյ խաչխաչի ծաղիկներին: Ծաղիկները աւելի պայծառ էին: «Նա յաղթում է, ասաց հիւանդը,—բայց տեսնենք:» Եւ նա ցած իջաւ պատշգամբից: Չորս կողմը նայելով և չը նկատելով իր յետևում կանգնած պահապանին, նա անցաւ ածուների միջով և ձեռքը տարաւ դէպի ծաղիկը, բայց չը վստահացաւ նրան կտրել: Նա իր մեկնած ձեռքում և յետոյ ամբողջ մարմնում զգում էր տաքութիւն և ծակոց: Կարծես այդ ծաղկի կարմիր թերթիկներից էլեքտրական հոսանք էր բղխում և նրա մարմինը ծակոտում: Նա աւելի մօտեցաւ ծաղկին, աւելի մօտ տարաւ իր ձեռքը, բայց ծաղիկը, կարծես, արձակելով մահացու և թունաւոր շունչ, պաշտպանում էր ինքն իրան: Նրա գլուխը պտըտւում էր: Նա գործ դրեց իր վերջին ուժը և արդէն բռնեց ճիւղից, որ ծաղիկը կտրէ, բայց յանկարծ մի ծանր ձեռք պառկեց նրա ուսին: Պահապանը բռնեց նրան. «Քաղել չէ կարելի, ասաց նրան ծերունի խօխօլը. Ածուները մի կոխ տուր: Քեզ պէս խելագարուածներ այստեղ շատ կան. եթէ ամեն մէկը մի ծաղիկ կտրէ, պարտիզում ոչինչ չի մնայ,» թախանձանօք ասաց նա, դեռ ևս բռնելով նրա ուսից:

Հիւանդը լռութեամբ նայեց նրան, ազատուեցաւ նրա ձեռքից և շփոթված գնաց իր ճանապարհով:—Ո՛հ, դժբաղդներ, մտածում էր նա, դուք չէք տեսնում, դուք մինչև այն աստիճան կուրացած էք, որ պաշտպանում էք նրան: Բայց ինչ որ էլ լինի ես կը վերջացնեմ նրա հետ: Եթէ ոչ այսօր, գոնէ էգուց կը համեմատենք մեր ուժերը: Իսկ եթէ ես կը մեռնեմ, միթէ մի և նոյն չէ...

Նա զբօսնում էր պարտիզում մինչև երեկոյ, սկսելով օտարոտի ծանօթութիւններ և խօսակցութիւններ ուրիշների հետ, որոնք այս վարմունքները համարում էին անմիտ և ցնորական: Հիւանդը ման էր գալիս իր ընկերակիցների կամ մէկի, կամ միւսի հետ: Նա համարեա մոռացել էր ծաղկի մասին, բայց, դուրս գալով այգիից և բարձրանալով պատշգամբը, նորից տեսաւ խիտ, մութ և ցօղապատ խոտերի մէջ երկու, կրակի պէս, կարմիր մարմիններ: Այն ժամանակը հիւանդը ջոկվեց ամբոխից և, կանգնելով պահապանի յետում, սպասում էր յարմար դէպքի: Ոչ ոք չը նկատեց, ինչպէս նա ցատկեց ածուների վրայով, կտրեց ծաղիկը և շտապով թագցրեց իր կրծքի վրա շապիկի տակ: Երբ թարմ և ցօղաէտ բոյսը կպաւ նրա մարմինին, նրա երեսը ծածկվեցաւ մեռելային գունաթափութեամբ և նա սաստիկ սարսափի մէջ լայն բացեց իր աչքերը: Նրա ճակատը պատեց սառը քրտինքով:

Հիւանդանոցի ճրագները վառեցին: Հիւանդների մեծամասնութիւնը անկողիններում պառկած սպասում էր ընթրիքի, բացի մի քանի անհանգիստներից, որոնք շտապով շրջում էին կորրիդօրները ու դահլիճը: Ծաղիկ ունեցող հիւանդը վերջինների մէջ էր: Նա ման էր գալիս ձեռքերը սեղմելով կրծքին, կարծես նա կամենում էր ճմլել, խորտակել նրա վրա թագցրած բոյսը: Երբ ուրիշները նրան մօտենում էին, նա խոյս էր տալիս նրանցից, վախենալով դիպչել նրանց իր հագուստի ծայրով:

—Մի մօտենաք, մի մօտենաք, աղաղակում էր նա: Իսկ հիւանդանոցում այդպիսի բացականչութիւնները սովորական էին և այդ պատճառով ուշադրութեան չէին արժանանում: Նա ման էր գալիս աւելի մեծ ու արագ քայլերով:» Ես ճնշում եմ քեզ: Ես կը խեղդեմ քեզ, խուլ ու կատաղի կերպով ասում էր նա, կրճտացնելով իր ատամները:

Ճաշարանում ընթրիքը պատրաստ էր: Մի քանի ներկած և բօզբաշով լցրած սկուտեղներ դրած էին մերկ, առանց սփռոցի, սեղանների վրա: Հիւանդները շարուեցան երկայն նստարանների վրա: Նրանցից իւրաքանչիւրին տուին մէկ մէկ կտոր սև հաց: Ամեն մի սկուտեղից ուտում էին փայտեայ դգալներով մօտ ութ հոգի: Արտօնութիւն ունեցողները առանձին էին ուտում: Մեր հիւանդը շուտով կլանեց իր բաժինը, որը տարել էր պահապանը նրա սենեակը և դրանով չը բաւականանալով գնաց ընդհանուր ճաշատունը:

—Թոյլ տուէք ինձ այստեղ նստելու, ասաց նա վերակացուին:

—Միթէ դուք չէք ընթրել, հարցրեց վերակացուն, լցնելով սկուտեղները կերակրով:

—Ես շատ եմ քաղցած և ինձ հարկաւոր է կազդուրվել: Իմ կեանքի միակ յենարանը կերակուրն է. դուք գիտէք, որ ես բոլորովին չեմ քնում:

—Կերէք, սիրելիս, եթէ կամենում էք: Տարաս, տուր այս պարոնին դգալ և հաց:

Նա մօտեցաւ մէկ մեծ ամանի և կերաւ կերակրի ահագին քանակութիւն:

—Դէ՛հ, բաւական է, ասաց վերջապէս վերակացուն, երբ նկատեց, որ բոլորեքեանք արդէն ընթրել և հեռացել են սեղանից, իսկ մեր հիւանդը դեռ ևս շարունակում էր մի ձեռքով կերակուր ուտել, իսկ միւսով սեղմել իր կուրծքը:

—Ո՛հ, եթէ դուք իմանայիք, թէ ինձ ինչքան ուժ է հարկաւոր, ինչքան ուժ: Մնաք բարև Նիկօլայ Նիկօլայիչ, ասաց հիւանդը, վեր կենալով տեղից և պինդ սեղմելով վերակացուի ձեռքը: Մնաք բարև:

—Ո՞ւր էք գնում, հարցրեց ժպտալով վերակացուն:

—Ե՞ս: Ոչ մի տեղ: Բայց կարելի է էգուց մենք չը տեսնվենք: Շնորհակալ եմ ձեզանից ձեր բարութեանը համար:

Նա կրկին սեղմեց վերակացուի ձեռքը: Նրա ձայնը դողում էր, աչքերում երևեցաւ արտասուք:

—Հանգստացէ՛ք, սիրելիս, հանգստացէ՛ք, պատասխանեց վերակացուն: Ինչո՞ւ էք ձեզ այդպէս յուզեցնում: Գնացէ՛ք պառկեցէ՛ք և լաւ քնեցէ՛ք: Ձեզ անհրաժեշտ է երկար քնել. եթէ լաւ քնէ՛ք, շատ էլ կառողջանաք:

Հիւանդը հեծկլտում էր: Վերակացուն գնաց պահապաններին հրամայելու, որ ընթրիքի մնացորդը հաւաքեն: Կէս ժամից յետոյ հիւանդանոցում ամենքը քնած էին, բացի մի մարդուց, որը շորերը հագին պառկած էր իր մահճում: Նրան տիրապետել էր տենդային սարսուռ և նա ակամայ սեղմում էր իր կուրծքը, որը, ինչպէս ինքը կարծում էր, մահացու կերպով թունաւորված էր:

(Կը շարունակվի)

